Քաղ. գործ թիվ ՇԴ/2291/02/16

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«07» հունիսի 2018թ. ք.Գյումրի

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

նախագահությամբ՝ դատավոր Լ.Խաչատրյանի
քարտուղարությամբ՝ Գ.Հայրությունյանի
կողմերի մասնակցությամբ՝
հայցվոր՝ Լ.Սուջյանի
հայցվորի ներկ.՝ Ա.Դավթյանի
պատասխանողների ներկ.՝ Ա.Սուվարյանի
Գ.Նազարյանի
երրորդ անձի ներկ.՝ Ա.Վարդանյանի

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Լավրենտի Սայադի Սուջյանի /այսուհետ՝ նաև Հայցվոր/ (ծնված՝ 07.07.1940թ., անձնագիր՝ AN 0211258, տրված՝ 23.07.2012թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի, Սավոյան փող., 9/2 տուն հասցեում) ընդդեմ «ՍԱՍՍՏԵՔՍ» ՍՊ ընկերության (հասցեն՝ ք.Գյումրի, Ղանդիլյան փող. 51/11), ՀՀ Կառավարության, Շիրակի մարզպետարանի /այսուհետ՝ նաև Պատասխանողներ/, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ անհիմն հարստացման հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջի մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր Լավրենտի Սայադի Սուջյանը 28.06.2016թ. հայց է ներկայացրել դատարան ընդդեմ «Սասստեքս» ՍՊ ընկերության՝ խնդրելով Պատասխանողից հօգուտ Հայցվորի բռնագանձել Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի 51/11 հասցեի շինության վրա կատարված անօտարելի շինարարական աշխատանքների արժեքը՝ 2.655.420 ՀՀ դրամի չափով:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 30.06.2016թ.-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

06.02.2017թ. «Սասստեքս» ՍՊ ընկերության ներկայացուցիչը դատարան է ներկայացրել առարկություն:

Դատարանի 16.03.2017թ. որոշմամբ գործով որպես պատասխանողներ ներգրավվել են ՀՀ Կառավարությունը և Շիրակի մարզպետարանը, որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ներգրավվել է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Պատասխանող ՀՀ Շիրակի մարզպետարանը 25.04.2017թ. գրավոր է ներկայացրել հայցադիմումի պատասխան:

Ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարությունը 16.05.2017թ. դատարան է ներկայացրել հայցադիմումի պատասխան:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Դիմելով Դատարան՝ Լավրենտի Սայադի Սուջյանը հայտնել է, որ 04.11.2003թ. գրանցվել է «Ն.Ա.Հ.» ՍՊ ընկերությունը, և ինքը հանդես է եկել որպես ՍՊ ընկերության տնօրեն: Ընկերությունը գործել է մինչև 2009 թվականը: Ընկերության ստեղծման նպատակն է եղել անվճար բնակության վայր, սնունդ և բուժօգնություն տրամադրել ծանր, անբուժելի հիվանդներին: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է եղել տարածք և նման տարածք է հանդիսացել Գյումրի քաղաքի մարզային հիվանդանոցի շենքերից մեկը, որը այդ պահին չի շահագործվել ոչ մի բաժանմունքի կողմից:

04.09.2008թ. ընկերության և «Շիրակի մարզային հիվանդանոց» ՓԲ ընկերության միջև կնքվել է վարձակալության պայմանագիր, որի համաձայն՝ Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի 51/11 հասցեում գտնվող մարզային հիվանդանոցի տարածքի 440,77քմ մակերեսով առաջին հարկը, 122,37քմ մակերեսով երկրորդ հարկը և 91,16քմ մակերեսով նկուղը վարձակալության իրավունքով հանձնվել է «Ն.Ա.Հ.» ՍՊ ընկերությանը՝ որպես առողջության կենտրոն օգտագործելու համար: Վարձավճարի չափը սահմանվել է 30.000 ՀՀ դրամ, վարձակալության ժամկետ սահմանվել է մինչև 04.09.2009թ.:

Վարձակալությաան պայմանագրի հիման վրա գրանցվել է «Ն.Ա.Հ.» ՍՊ ընկերության վարձակալության իրավունքը և 22.08.2008 թվականին ՀՀ ԿԱ ԱԳ կադաստրի ՊԿ-ի կողմից տրամադրվել է անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման վկայական:

04.09.2008թ. իր և Շիրակի մարզային հիվանդանոցի տնօրենի միջև կնքվել է համատեղ պայմանագիր, այն մասին, որ Շիրակի մարզային հիվանդանոցից վարձակալական իրավունքով հատկացված տարածքում «Առողջության կենտրոն Ն.Ա.Հ» ՍՊ ընկերությունը հիվանդանոցի տնօրենի թույլտվությամբ կատարի հետևյալ վերանորոգման-շինարարական աշխատանքները՝ շենքի հիմնական վերանորոգում, ջրագծի անցկացում, կտուրի վերանորոգում, պատուհանների ապակեպատում, սանհանգույցների հատակի կերամիկական սալիկների տեղադրում, ջրագծի անցկացում, կոյուղու խողովակների տեղադրում, զուգարանակոնքերի, լվացարանների տեղադրում, էլեկտրալարերի մոնտաժում և մետաղական դռների տեղադրում: Փոխադարձ համաձայնեցված կարգով իրականացվել են նշված բոլոր շինարարական, վերանորոգման աշխատանքները:

Աշխատանքների իարկանացումը պատվիրվել է «Ահուրյանի կոռպշին» ՍՊ ընկերությանը: 2008թ. հոկտեմբեր ամսին տրված թիվ 1 ակտի համաձայն կատարվել են աշխատանքներ, նշված են կատարված աշխատանքի տեսակը, քանակը, արժեքը: Ընդհանուր արժեքով կատարված աշխատանքները կազմել են 2.655.420 ՀՀ դրամ:

«Ն.Ա.Հ.» ՍՊ ընկերության կողմից թե վերանորոգման աշխատանքներ կատարելիս, և թե դրանից հետո մշտապես հսկողություն է իրականացվել տվյալ շինության նկատմամբ: Վերջերս իմացել է, որ Գյումրի քաղաքի [illegible] փողոցի 51/11 հասցեում գտնվող շենքը կից շինությունների հետ միասին [illegible] է պատասխանող «Սասունեքս» ՍՊ ընկերությանը: Նշված հասցեում գտնվող ընկերությունը սկսել է շինարարական աշխատանքներ:

Փաստորեն <<Ն.Ա.Հ.>> ՍՊ ընկերության կողմից կատարված բարենորոգումները, վերանորոգումները անհատույց մնացել են պատասխանող կազմակերպությանը, ինչի հետևանքով վերջինս դարձել է անհիմն հարստացող: Կատարված աշխատանքները ամրացված են շինությանը, դրանք անբաժանելի են, անօտարելի, այդ առումով ինքը պահանջ է ներկայացնում ոչ թե ապրանքային տեսանկյունից, այլ գումարային:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092, 109 և 1095 հոդվածներիի պահանջներով՝ Հայցվորը դատարանից խնդրել է <<Սասստեքս>> ՍՊ ընկերությունից հօգուտ <<Ն.Ա.Հ.>> ՍՊ ընկերության բռնագանձել Հայցվորի կողմից Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի 51/11 հասցեի շինության վրա կատարված անօտարելի շինարարական աշխատանքների արժեքը՝ 2.655.420 ՀՀ դրամի չափով:

Դատաքննության ընթացքում Հայցվորի ներկայացուցիչը և Հայցվորը նույնաբովանդակ բացատրություն են տվել և պնդել են ներկայացրած պահանջը: Ավելացրել են, որ Շիրակի մարզպետարանը նույնպես դարձել է անհիմն հարստացող, քանի որ Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի 51/11 հասցեի շինությունը հանձնվել է ՀՀ Կառավարության բալանսին, որն էլ շինությունը օտարել է <<Սասստեքս>> ՍՊ ընկերությանը: Իր վստահորդը կատարել է բարենորոգման աշխատանքներ, բարձրացրել է գույքի արժեքը, մինչև բարենորոգում կատարելը այդ շենքը օգտագործման ենթակա չի եղել: Մարզպետարանը անհիմն հարստացել է նման եղանակով:

Դատարանից խնդրել է <<Սասստեքս>> ՍՊ ընկերությունից և ՀՀ կառավարությունից հօգուտ Հայցվորի բռնագանձել 2.655.420 ՀՀ դրամ՝ որպես անհիմն հարստացման հետևանքով պատճառված վնասի գումարի:

Հայցվորը հայտնել է, որ նշված շենքը պետք է իրեն հանձնվեր անհատույց, սակայն ՀՀ կառավարությունը մերժել է շենքը իրեն հանձնել: Ինքը ութ միլիոն գումար է ծախսել այդ շենքի վրա: Մի քանի տարի հետո իմացել է, որ մեկ միլիոն դրամով շենքը վաճառել է այլ կազմակերպության: Հայտնել է, որ ինքը շինարարական աշխատանքները կատարել է մինչև վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտը: Վարձակալության պայմանագրի վերջնաժամկետ եղել է 04.09.2009թ.-ը, դրանից հետո դիմել է ՀՀ կառավարությանը՝ պայմանագրի ժամկետը երկարացնելու համար, սակայն պայմանագրի ժամկետը չի երկարաձգվել: Հայցվորի ներկայացուցիչը հայտնել է, որ Հայցվորը ՀՀ կառավարությանը դիմել է բանավոր, գրավոր չի դիմել: Վարձակալության պայմանագրից է բխել շինարարական աշխատանքների կատարումը: Հայցվորին թույլ տրվել է կատարել շինարարական աշխատանքներ, կողմերի միջև կազմվել է արձանագրություն: Ըստ էության կողմերի միջև կազմված վարձակալության պայմանագիրը կնքվել է շաբլոն ձևի վրա և այլ կետեր պայմանագրում առանձին չի նշվել:

Ինչ վերաբերվում է հայցային վաղեմության ժամկետներին, ապա Հայցվորը մշտապես կապի մեջ է եղել ՀՀ առողջապահության նախարարության հետ, ակնկալել է, որ շենքը հատկացվելու է իրեն և չի մտածել, որ կարող է իր իրավունքները խախտվի, հետևաբար պայմանագրի ժամկետի ավարտից հետո Հայցվորը չի դիմել իր խախտված իրավունքները վերականգնելու համար: Սույն դեպքում հայցային վաղեմության ժամկետ կիրառելի չէ: Իր վստահորդը վստահել է մարզպետարանին, ՀՀ Կառավարությանը: Հիմք չի ունեցել չվստահելու, քանի որ Հայցվորը ցանկացել է բարեգործություն կատարել և չէր կարող ենթադրել, որ իրեն [illegible] գործունեությունը ծավալել:

Հայցվորը հայտնել է, որ «Ն.Ա.Հ.» ՍՊ ընկերությունը չի կարողացել իր գործունեությամբ զբաղվել, կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, սակայն գործունեություն չեն հասցրել ծավալել, քանի որ ՀՀ Կառավարությունը շենքը անհատույց չի հատկացրել «Ն.Ա.Հ.» ՍՊ ընկերությանը: 2009թ.-ից հետո, երբ դադարեցվել է «Ն.Ա.Հ.» ՍՊ ընկերության գործունեությունը, ինքը ակնկալել է, որ պետք է իր մտածած գործունեությունը ծավալի: Ենթադրել է, որ իր բարեգործական գործունեությունը վերջ ի վերջո ծավալելու է: Վարձակալության պայմանագրում որևէ կետ չի նշվել կատարված աշխատանքների փոխհատուցման վերաբերյալ:

Վկայի ցուցմունքը.

Վկա Հարություն Կիրակոսյանը ցուցմունք է տվել դատարանին և հայտնել է, որ հանդիսանում է հայցվոր Լավրենտի Սուջյանի կոլեգան: Տեղյակ է, թե Լավրենտի Սուջյանը ինչ պահանջ է ներկայացրել դատարան: Հայտնել է, որ Լավրենտի Սուջյանին հատկացված տարածքը եղել է իրենց տնակի դիմաց՝ երկաթ գծի հիվանդանոցի բակում: Այդ տարածքում Լավրենտի Սուջյանը կատարել է շինարարական աշխատանքներ: Հետագայում տեսել է, որ այնտեղ աշխատանք է գնում, ապիտակ խալաթավորներ կան, մտածել է, որ այնտեղ արդեն աշխատանքներ են գնում և ինչ-որ բաժանմունք է բացվել: Մի անգամ եկել տեսել է, որ շինության դռները փակ են եղել: Իմացել է, որ Լավրենի Սուջյանը իր հայրիկին խնդրել է նայել շինության տարածքին: Հոր մահանալուց հետո շինությունը սկսել են քանդել: Հաստատում է, որ հայցվորն է շինարարական աշխատանքներ կատարել մարզային հիվանդանոցի մասնաշենքում: Տեսել է, որ դրսում շինարարական գործեր են կատարել և այդ գործերը ղեկավարել է Լավրենտի Սուջյանը: Ինքը չի իմացել, որ Լավրենտի Սուջյանին թույլ չտային շինարարական աշխատանքներ կատարեր: Այժմ տվյալ շենքը կա, դռները փայտերով փակված է, մի մասում շինարարություն է գնացել և ինչ-որ հիմնարկ է գործում: Այդ տարածքում Սուջյանի սարքածը լրիվ քանդված է, ոչ մի բան չի մնացել: Լավրենտի Սուջյանը ջրագծերը իրենց թաղից է քաշել: Այդ ջրագիծը տեղյակ չէ քանդել հանել են, թե ոչ: Շինարարական աշխատանքները կատարվել են երկրաշարժից հետո՝ մոտավորապես գալիս է 2008-2009 թվականները: Իր հայրը մահացել է 2011թ.-ին: Բոլոր աշխատանքները կատարվել են մինչև իր հոր մահանալը:

3. Պատասխանողների իրավական դիրքորոշումը.

Պատասխանող «Սասստեքս» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 06.02.2017 թվականին առարկություն է ներկայացրել դատարան, որով հայտնել է, որ առարկում է հայցի դեմ, այն անհիմն է և հայցապահանջն ամբողջությամբ ենթակա է մերժման:

Հայցվոր Լավրենտի Սայաղի Սուջյանի կողմից նշված «Ն.Ա.Հ» ՍՊ ընկերությունը, որը իբրև կատարել է բարելավումներ, ներկայումս ՀՀ պետական ռեգիստրում գրանցված է որպես գործունեությունը դադարեցված ընկերություն, ուստի այստեղ հարց է առաջանում, թե Հայցվորը իրավունք ունի արդյոք դատարան դիմել մի ընկերության կողմից կատարված բարելավումների արժեքը պահանջելու խնդրանքով, որի գործունեությունը այս պահին դադարեցված է:

Հայցվորը պետք է ապացուցի, նաև որ հանդիսանում է ընկերության գործող տնօրենը և այդ հիմքով տեսականորեն իրավունք ունի հայց ներկայացնել դատարան՝ ընկերության կողմից կատարված ծախսերը պահանջելու խնդրանքով: Եթե

ընկերության գործունեությունը դադարեցված է, ապա դա նշանակում է, որ այդ ընկերությունը որևէ աշխատակից չունի, այդ թվում և տնօրեն, հետևաբար նախկին տնօրենը իրավունք չունի նման պահանջով և նման հիմնավորմամբ պահանջ ներկայացնել դատարան:

Լավրենտի Սայադի Սուջյանը հանդիսանում է ոչ պատշաճ հայցվոր, քանի որ ծախսերը, ըստ իրեն, կատարել է ընկերությունը՝ որպես իրավաբանական անձ, իսկ այժմ նա դատարան է դիմել որպես ֆիզիկական անձ, ուստի գտնում է, որ հայցը ենթակա է մերժման:

Հայտնել է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է Հայցվորին փոխարինել պատշաճ հայցվորով:

Ըստ հայցվորի՝ ընկերությունը այդ ծախսերը կատարել է տարիներ առաջ, երբ այդ շենքը դեռևս հանդիսանում էր Հայաստանի Հանրապետության սեփականությունը: Պատասխանողը այդ շենքը գնել է ՀՀ կառավարության 04.02.2016 թվականի թիվ 84-Ա որոշման հիման վրա, 15.03.2016թ-ին կնքված պետական գույքի օտարման և գրավի պայմանագրի հիման վրա, ընդ որում այն պահին, երբ անշարժ գույքը հանձնվել է իրենց, Հայցվորի ասած բարելավումները այդտեղ արդեն իսկ առկա չեն եղել, հետևաբար, հարկավոր է «Սասստեքս» ՍՊ ընկերությանը ևս փոխարինել պատշաճ պատասխանողով՝ Հայաստանի Հանրապետությամբ, ի դեմս ՀՀ կառավարության, քանի որ բարելավումները կատարվել են նրա օրոք, իսկ անշարժ գույքը իրենց տրամադրելիս այդտեղ ոչ մի բարելավում՝ այդ թվում և Հայցվորի կողմից նշված շինարարական աշխատանքների արդյունքները, արդեն իսկ չեն եղել, ողջ տարածքը եղել է քարուքանդ, անմխիթար և թալանված վիճակում, այնտեղ-բացի չորս պատերից այլևս ոչինչ չի եղել, այդ թվում և՝ Հայցվորի կողմից մատնանշված բարելավումները:

Հետևաբար, Հայցվորը պարտավոր է ապացուցել, որ այն պահին, երբ անշարժ գույքը առքուվաճառքից հետո ՀՀ-ից հանձնվել է իրենց, այդ պահի դրությամբ այդ բարելավումները եղել են այդտեղ, և որ այն մինչ այդ որևէ երրորդ անձի կամ վաճառողի կողմից թալանված կամ քանդված չի եղել, և որ այդ բարելավումները հանձնվել են իրենց այն վիճակում ինչ վիճակում, որ նկարագրում է Հայցվորը: Անշարժ գույքը գնելու պահին այնտեղ ոչ մի բարելավում, այդ թվում և Հայցվորի կողմից նշվածները չեն եղել: Այսինքն՝ Հայցվորը պետք է կրի այն փաստական հանգամանքների ապացուցման բեռը, որ մինչ անշարժ գույքը իրենց տիրապետման տակ անցնելը իր կողմից մատնանշված բարելավումները որևէ մեկ այլ երրորդ անձի կողմից մասնակի կամ ամբողջությամբ քանդված կամ վնասված չի եղել և որ այն ամբողջությամբ անցել է իրենց տիրապետման ներքո:

Հայցվորը չի ապացուցել նաև, որ իր կողմից տարիներ առաջ կատարված բարելավումների՝ ներկայիս արժեքը կազմում է հենց այնքան, որքան որ նա այժմ Պատասխանողից պահանջում է՝ 2.655,420 ՀՀ դրամ, որովհետև ցանկացած բարելավում ինը տարիների ընթացքում բնական մաշվածության պատճառով պետք է, որ լինի ավելի քիչ արժեք ունեցող, քան այն եղել է բարելավումը կատարված ժամանակ՝ 2008 թվականին:

Որպեսզի Հայցվորի կողմից մատնանշված բարելավումը դիտարկվի որպես անհիմն հարստացում և այդ հիմքով իրենցից գումար բռնագանձվի, դրա համար Հայցվորը պետք է ապացուցի նաև, որ այդ բարելավումների հաշվին Պատասխանողի մոտ ավելացել է գույք, կամ իրենք խնայել են գումարներ: Անշարժ գույքը իրենց հանձնելիս այդ տարածքում ոչ մի բարելավում, այդ թվում և Հայցվորի կողմից մատնանշված, չի եղել, այլ դրան հակառակ ամբողջը եղել է քանդված և թալանված

վիճակում: Այս ամենին կարող են ականատես լինել նաև անհրաժեշտության դեպքում դատարանի կողմից կատարվելիք տեղատեսության արդյունքում:

2016թ-ին կնքված առուվաճառքի պայմանագրով ողջ անշարժ գույքը, որտեղ որ ըստ Հայցվորի ինը տարի առաջ իբրև թե կատարված է եղել բարելավումներ, վաճառվել է Պատասխանող ընկերությանը: Այսինքն՝ իրենք հանդիսանում են պատշաճ գնորդներ, և ոչ մի պատասխանատվություն չունեն և չեն կարող կրել մինչև անշարժ գույքը իրենց վաճառելը և վաճառողի կողմից փաստացի իրենց հանձնվելը, այլոց կողմից այդ անշարժ գույքի վրա կատարված բարելավումների համար, և դա այն պարագայում, երբ փաստացի անշարժ գույքը իրենց հանձնելիս այդ բարելավումները արդեն իսկ փաստացի ֆիզիկապես առկա չեն եղել և իրենց չեն փոխանցվել: Այսինքն այդ պարագայում, եթե որևէ մեկը այդ թվում և Հայցվորը որևէ պահանջ ունի, ապա նա պետք է այն ուղղի ոչ թե իրենց, այլ Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ կառավարությանը:

17.08.2017թ.-ն «Սասունքս» ՍՊ ընկերության ներկայացուցիչը դատարան է ներկայացրել դիմում, որով խնդրել է գործով կիրառել հայցային վաղեմություն և այս հիմքով հայցը մերժել:

Պատասխանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչը 18.10.2017 թվականին դիմում է ներկայացրել դատարան, որով հայտնել է, որ Հայցվորը բաց է թողել իրավունքի պաշտպանության նպատակով դատարան դիմելու համար սահմանված ժամկետը, ուստի ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում է պահանջի նկատմամբ կիրառել հայցային վաղեմություն:

Քաղաքացիական գործն ըստ հայցի Լավրենտի Սուջյանի ընդդմ պատասխանողներ՝ «Սասունքս» ՍՊ ընկերության, ՀՀ Կառավարության, Շիրակի մարզպետարանի, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսների Նախարարության՝ անհիմն հարստացման հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջի մասին՝ մերժել:

Դատաքննության ընթացքում ՀՀ Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչը պնդել է ներկայացրած դիմումը և խնդրել է գործով կիրառել հայցային վաղեմություն՝ մերժելով հայցապահանջը: Հայտնել է, որ վարձակալության պայմանագրի ժամկետը ավարտվել է 2009թ.-ին և Հայցվորը իր խախտված իրավունքների վերականգնման համար պետք է դիմեր ՀՀ կառավարությանը:

4.Երրորդ անձի իրավական դիրքորոշումը.

Երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցչը 16.05.2017թ. դատարան է ներկայացրել հայցադիմումի պատասխան, որով հայտնել է, որ սույն գործով ներկայացված չէ որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց առ այն, որ Հայցվորի և «Շիրակի մարզային հիվանդանոց» ՓԲ ընկերության միջև կնքվել է համաձայնություն՝ վարձակալած գույքից անբաժանելի բարելավումներ կատարելու և այդ աշխատանքների դիմաց հետագայում փոխհատուցում ստանալու մասին: Այսինքն՝ առնվազն պետք է լիներ վարձակալության պայմանագրին կից լրացուցիչ համաձայնություն կամ փաստաթուղթ, որով հստակ կնախատեսվեր կատարված բաժանելի կամ անբաժան բարելավումների դիմաց հատուցման պայմանները: Այնինչ, Հայցվորը իր ռիսկով կատարել է գույքի հիմնանորոգման աշխատանքները:

Հայցվորը պահանջի հիմքում դրել է «հաստատեղ արձանագրությունը» վերնագրված փաստաթուղթը, որի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ

Շիրակի մարզային հիվանդանոցի տնօրեն Ս.Բեյբությանը տվել է թույլտվություն՝ շինարարական վերանորոգման աշխատանքներ կատարելու համար:

«Համաձայնություն» և «թույլտվություն» հասկացությունները նույնական չեն, դրանք ունեն տարբեր նշանակություններ:

Առաջին դեպքում «համաձայնությամբ» վարձատուն տալիս է իր դրական դիրքորոշումը, հավանություն է տալիս, ընդունում է համապատասխան աշխատանքներ կատարելու փաստը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 626-րդ հոդվածի տրամաբանությամբ ծագող հնարավոր հետևանքներով, մյուս դեպքում՝ «թույլտվությամբ» վարձատուն ընդամենը չի առարկում կատարվող աշխատանքներին, թույլատրում է կատարել ինչ-որ գործողություններ՝ թողնելով շինարարական աշխատանքների ռիսկը վարձակալի վրա:

Բացի այդ, եթե ընդունի, որ Շիրակի մարզային հիվանդանոցի տնօրենի կողմից տրված թույլատվությունը այնուամենայնիվ հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 626-րդ հոդվածի իրավակարգավորումների ենթատեքստում կազմված փաստաթուղթ, ապա հարկ է նշել, որ դրանում առկա չեն դրույթներ, իրականացվելիք բարելավումների դիմաց վարձատուի կամ մեկ այլ անձի կողմից հատուցման պարտավորության ծագման մասին: Նշված փաստաթուղթը ընդամենը իրականացվելիք աշխատանքների ցանկն է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Ուստի երրորդ անձ հանդիսացող ՀՀ ֆինանսների նախարարությունը գտնում են, որ ներկայացված համատեղ արձանագրությունը չի կարող դիտարկվել որպես համաձայնություն, ավելին՝ այն չի հանդիսանում վերաբերելի ապացույց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածով անհիմն հարստացման փաստը որակելու համար անհրաժեշտ է, որ անձը այլ անձի հաշվին պետք է ձեռք բերի կամ խնայի գույք, այսինքն՝ ձեռք բերողի մոտ գույքի ավելացումը պետք է պայմանավորված լինի տուժողի մոտ գույքի պակասեցմամբ և գույքը պետք է ձեռք բերվի կամ խնայվի առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ հարստացումը անօրինական ձևով: Եթե անգամ Հայցվորի մոտ ինչ-որ կերպ ծագել է իր կողմից կատարված բարելավումների դիմաց հատուցման իրավունքը, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի ուժով դա չի կարող դիտարկվել անհիմն հարստացում նաև այն պատճառով, որ ըստ էության վերանորոգման աշխատանքները անբաժանելի են վարձակալված գույքից, իսկ սույն գործով պատասխանող «Սասսուեքս» ՍՊ ընկերությունը հանդիսանում է ընդամենը գույքի վարձակալ, այլ ոչ թե՝ սեփականատեր:

Հայցվորի պահանջը Ֆինանսների նախարարությունը համարում է առարկայազուրկ՝ պայմանավորված ևս մեկ կարևոր հիմքով՝ լրացել են հայցային վաղեմության ժամկետները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով [illegible] պաշտպանության ժամանակահատվածը:

Նույն օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային [illegible] ընդհանուր ժամկետը երեք տարի է:

Հայցվորի և «Շիրակի մարզային հիվանդանոց» ՓԲԸ-ի միջև վարձակալության պայմանագիրը կնքվել է 04.09.2008թ., ավարտվել՝ 04.09.2009թ.-ին:

Այսինքն՝ եթե Հայցվորն ունի գույքի նկատմամբ կատարված բարելավումների դիմաց հատուցման իրավունք, ապա բաց են թողնվել պահանջ ներկայացնելու ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված հայցային վաղեմության ժամկետները:

Ելնելով վերոգրյալից, ՀՀ ֆինանսների նախարարությունը գտնում է, որ հայցն իրավական հիմքից զուրկ է, ուստի Դատարանին խնդրել է մերժել այն ամբողջությամբ: Միաժամանակ գտնում է, որ ՀՀ կառավարությունը և ՀՀ ֆինանսների նախարարությունը սույն գործով չեն կարող հանդիսանալ պատշաճ դատավարության մասնակիցներ:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 6-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ նախարարության նպատակները և խնդիրներն են՝ իր իրավասության սահմաններում պետության գույքային շահերի պաշտպանությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական մարմինները Հայաստանի Հանրապետության անունից իրենց գործողություններով կարող են գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել, ինչպես նաև դատարանում հանդես գալ իրենց իրավասության շրջանակներում:

Լավրենտի Սուջյանի պահանջը ներկայացված է «Սասստեքս» ՍՊԸ-ի դեմ, որը չի հանդիսանում պետական մարմին կամ հիմնարկ: Դատարանի արձանագրային որոշմամբ գործով որպես պատասխանող է ներգրավվել նաև ՀՀ Շիրակի մարզպետարանը:

ՀՀ կառավարության 02.11.2006թ. թիվ 1911-Ն որոշման N9 հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ «Շիրակի մարզային հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունը և «Գյումրու Գ.Գյուլբենկյանի անվան վիրաբուժական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունը միաձուլման ձևով վերակազմակերպվել են՝ ստեղծելով «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն, իսկ ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել է ՀՀ Շիրակի մարզպետին:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ բաժնետիրական ընկերություն է համարվում առևտրային կազմակերպություն հանդիսացող այն տնտեսական ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

Ընկերությունն իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:

Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:

Ընկերությունը կարող է ունենալ օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակներ իրականացնելու համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրել քաղաքացիական պարտականություններ:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի համաձայն՝

«Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

Այսինքն վեճի կողմեր են <<Ն.Ա.Հ>> ՍՊ ընկերությունը, <<Շիրակի մարզային հիվանդանոց>> ՓԲ ընկերությունը /իրավահաջորդ <<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերությունը՝ հիմք ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի 23.11.2012թ. տեղեկանք/ և <<Սասատեքս>> ՍՊ ընկերությունը, վեճը ծագել է իրավաբանական անձանց միջև, չի առնչվում և չի կարող առնչվել պետության որևէ գույքային շահի հետ, հետևաբար սույն վեճի հանգուցալուծման արդյունքում ընդունվելիք դատական ակտը չի կարող շոշափել Հայաստանի Հանրապետության, պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց որևէ իրավունք կամ օրինական շահ:

Դատաքննության ընթացքում ՀՀ Ֆինանսների նախարարության ներկայացուցիչը հայտնել է, որ հանդես է գալիս նաև ՀՀ կառավարության անունից և պնդում է իր կողմից ներկայացրած հայցադիմումի պատասխանը: Խնդրել է կիրառել հայցային վաղեմություն:

<u>4. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերն են.</u>

1. Հայցվոր Լավրենտի Սայադի Սուջյանի անձնագիրը (ծնված՝ 07.07.1940թ., անձնագիր՝ AN 0211258, տրված՝ 23.07.2012թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի, Սավոյան փող., տուն 9/2 հասցեում):

2. Իրավաբանական անձի պետական գրանցման թիվ 03 Ա 060935 վկայականի համաձայն՝ <<Ն.Ա.Հ>> իրավաբանական անձը 04.11.2003թ. գրանցվել է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: Ընկերության տնօրեն է գրանցվել Լավրենտի Սուջյանը:

3. <<Շիրակի մարզային հիվանդանոց>> ՓԲ ընկերության և <<Ն.Ա.Հ>> ՓԲ ընկերության միջև 04.09.2008թ. կնքված վարձակալության պայմանագրի համաձայն՝ <<Շիրակի մարզային հիվանդանոց>> ՓԲ ընկերության կողմից <<Ն.Ա.Հ>> ՓԲ ընկերությանը վարձակալությամբ տրամադրվել է Շիրակի մարզային հիվանդանոցից տարածք, որը գտնվում է Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 51/11 հասցեում: Գույքը վարձակալությամբ է տրվել 04.09.2008թ.-ից մինչև 04.09.2009թ.-ը: Պայմանագրի 1.5 կետի համաձայն՝ գույքը նախատեսված է որպես առողջապահության կենտրոն օգտագործելու համար: Պայմանագրի 2.4.2 կետի համաձայն՝ վարձակալը պարտավոր է պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում, հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

4. 04.09.2008թ. տրված անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման թիվ 0106922 վկայականի համաձայն՝ Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի 51 հասցեի տարածքը հանձնվել է վարձակալության Լավրենտի Սայադի Սուջյանին՝ մինչև 04.09.2009թ.-ը:

5. <<Ն.Ա.Հ>> ՍՊ ընկերության և Շիրակի մարզային հիվանդանոցի միջև 04.09.2008թ. կազմված համատեղ արձանագրության համաձայն՝ Շիրակի մարզային հիվանդանոցի տնօրենը թույլատրել է <<Ն.Ա.Հ>> ՍՊ ընկերությանը կատարել շինարարական աշխատանքներ Շիրակի մարզային հիվանդանոցից վարձակալական իրավունքով հատկացված տարածքում:

6. <<Ն.Ա.Հ>> ՍՊ ընկերության տնօրենի և <<Ախուրյանի կոռպշին>> ընկերության տնօրենի միջև 2008թ. հոկտեմբեր ամսին կազմված թիվ 1 ակտի համաձայն՝ կապալառու <<Ն.Ա.Հ>> ՍՊ ընկերությանը <<Ախուրյանի կոռպշին>> ընկերության կողմից մատուցված շինարարարկան աշխատանքների և տրամադրված շինարարական նյութերի արժեքը կազմել է 2.655.420 ՀՀ դրամ:

7. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ <<Ն.Ա.Հ>> ՍՊ ընկերության գործունեությունը համարվել է դադարեցված 16.06.2009թ.-ից:

8. Հայցվորի ցուցմունքով հաստատվել է այն փաստը, որ <<Ն.Ա.Հ>> ՍՊ ընկերության գործունեության դադարեցումից առաջ, բացի վարձակալած գույքի վերանորոգման աշխատանքներից, ընկերությունը որևէ գործունեություն չի ծավալել:

9. 19.07.2006թ. տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 15102013-08-036 վկայականի համաձայն՝ Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի թիվ 19 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Շիրակի մարզպետարանին:

10. 15.10.2013թ. տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15102013-08-036 վկայականի համաձայն՝ Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 51/11 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետությանը:

11. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության և <<Սասստեքս>> ՍՊ ընկերության միջև 15.03.2016թ. կնքված թիվ 766-0 պետական գույքի օտարման և գրավի պայմանագրի համաձայն՝ Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 51, 51/9, 51/10 և 51/11 հասցեում գտնվող գույքերը ուղղակի վաճառքի ձևով օտարվել է <<Սասստեքս>> ՍՊ ընկերությանը:

12. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18032016-08-0016 վկայականի համաձայն՝ Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 51/11 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով գրանցվել է <<Սասստեքս>> ՍՊ ընկերության անվամբ:

5. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Ուսումնասիրելով հայցադիմումը, հայցադիմումի պատասխանները, լսելով կողմերին, ուսումնասիրելով գործում առկա գրավոր ապացույցները, գնահատելով դրանք իրենց համակցության մեջ, Դատարանը գտնում է, որ հայցը բավական է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Դատարանն ապացուցված է համարում, որ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 04.11.2003թ. գրանցվել է <<Ն.Ա.Հ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Ընկերության տնօրեն է հանդիսանում Լավրենտի Սուջյանը:

«Շիրակի մարզային հիվանդանոց» ՓԲ ընկերության և «Ն.Ա.Հ» ՓԲ ընկերության միջև 04.09.2008թ. կնքվել է վարձակալության պայմանագիր, որով «Շիրակի մարզային հիվանդանոց» ՓԲ ընկերությունը «Ն.Ա.Հ» ՓԲ ընկերությանը վարձակալությամբ տրամադրել է Շիրակի մարզային հիվանդանոցից տարածք, որը գտնվել է Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 51/11 հասցեում: Գույքը վարձակալությամբ է տրվել 04.09.2008թ.-ից մինչև 04.09.2009թ.-ը: Վարձակալության պայմանագրի հիման վրա տրվել է անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման թիվ 0106922 վկայականը, որի համաձայն՝ Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի 51 հասցեի տարածքը Լավրենտի Սայադի Սուջյանին վարձակալությամբ հանձնվել է մինչև 04.09.2009թ.-ը: Պայմանագրի 1.5 կետի համաձայն՝ գույքը նախատեսված է որպես առողջապահության կենտրոն օգտագործելու համար: Պայմանագրի 2.4.2 կետի համաձայն՝ վարձակալը պարտավոր է պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում, հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

Շիրակի մարզային հիվանդանոցի տնօրենը թույլատրել է «Ն.Ա.Հ» ՍՊ ընկերությանը Շիրակի մարզային հիվանդանոցից վարձակալական իրավունքով հատկացված տարածքում կատարել շինարարական աշխատանքներ:

«Ն.Ա.Հ» ՍՊ ընկերության գործունեությունը դադարեցվել է 16.06.2009թ.-ից /հիմք՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված տեղեկանք/:

Դատարանը հաստատված է համարում նաև այն հանգամանքը, որ Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 51/11 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանել է Հայաստանի Հանրապետությանը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության և «Սասստեքս» ՍՊ ընկերության միջև 15.03.2016թ. կնքվել է թիվ 766-0 պետական գույքի օտարման և գրավի պայմանագիրը, որով Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 51, 51/9, 51/10 և 51/11 հասցեում գտնվող գույքերը ուղղակի վաճառքի ձևով օտարվել է «Սասստեքս» ՍՊ ընկերությանը: Պայմանագրի հիման վրա նշված գույքերը սեփականության իրավունքով 18.03.2016 թ.-ին գրանցվել է «Սասստեքս» ՍՊ ընկերության անվամբ:

Հայցվոր Լավրենտի Սայադի Սուջյանը հայց ներկայացնելով դատարան՝ խնդրել է «Սասստեքս» ՍՊ ընկերությունից հօգուտ Հայցվորի բռնագանձել 2.655.420 ՀՀ դրամ գումար, քանի որ իրեն վարձակալությամբ հատկացված Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի 51/11 հասցեի շինության վրա կատարել է անօտարելի շինարարական աշխատանքներ, որի արժեքը կազմել է 2.655.420 ՀՀ դրամ: Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի 51/11 հասցեի շինությունը այժմ օտարվել է «Սասստեքս» ՍՊ ընկերությանը, որն էլ ըստ իրեն՝ իր հաշվին անհիմն հարստացել է:

«Սասստեքս» ՍՊ ընկերության ներկայացուցիչը դատարան է ներկայացրել դիմում, որով խնդրել է գործով կիրառել հայցային վաղեմություն և այս հիմքով հայցը մերժել:

Հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմում է ներկայացրել նաև պատասխանող ՀՀ Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչը և ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության ներկայացուցիչը:

Հայցվոր կողմը առարկել է հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունների դեմ, հայտնել է, որ ինքը տեղյակ չի եղել այն մասին, որ վիճելի գույքը օտարվել է այլ ընկերության: Այդ մասին իմացել է պատասխանողից, որը պետք է,

որ շինության վրա շինարարական աշխատանքներ են կատարվում, սակայն 2009թ.-ից մինչև 2016թ.ը ընկած ժամանակահատվածում իր իրավունքների խախտման մասին տեղյակ չլինելու վերաբերյալ Հայցվորը Դատարանին որևէ ապացույց չի ներկայացրել:

Դատարանը, քննարկելով հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումները, գտնում է, որ սույն պահանջի նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու մասին Դատապախանողների ներկայացուցիչների և ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի դիմումները հիմնավորված են, բխում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-337 հոդվածների պահանջներից՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

Նույն օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ:

Նշված հոդվածներից հետևում է, որ օրենսդիրն ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է այդ ժամկետի հաշվարկման կարգը: Այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն պահից, երբ պարտատիրոջ մոտ ծագում է պարտավորության կատարում պահանջելու իրավունքը:

Սույն դեպքում <<Շիրակի մարզային հիվանդանոց>> ՓԲ ընկերության և <<Ն.Ա.Հ>> ՍՊ ընկերության միջև 04.09.2008թ. կնքված վարձակալության պայմանագրի վերջնաժամկետ է սահմանվել 04.09.2009թ.-ը:

Մինչև վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտը՝ 16.06.2009թ.-ից, դադարեցվել է <<Ն.Ա.Հ>> ՍՊ ընկերության գործունեությունը:

Հայցվորի ցուցմունքով հաստատվել է այն փաստը, որ <<Ն.Ա.Հ>> ՍՊ ընկերության գործունեության դադարեցումից առաջ ընկերությունը կատարել է միայն վարձակալած շինության վերանորոգման աշխատանքները, սակայն որևէ գործունեություն չի ծավալել:

Դատարանը հաստատված է համարում, որ վարձակալության պայմանագրի դադարումից հետո՝ 04.09.2009թ.-ին, դադարել է Հայցվորի լիազորությունները վիճելի գույքի նկատմամբ, քանի որ պայմանագրի 2.4.2 կետի համաձայն՝ վարձակալը պարտավոր է պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում, հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

Դատարանն արձանագրում է, որ Լավրենտի Սուջյանի իրավունքի խախտման պաշտպանության ժամկետի ընթացքը սկսվել է 04.09.2009թ.-ից՝ վարձակալության պայմանագրի դադարմամբ:

Բացի այդ, Դատարանն արձանագրում է, որ կողմերի միջև կնքված վարձակալության պայմանագրով վարձակալած շինության [illegible] վերանորոգման աշխատանքների փոխհատուցման վերաբերյալ [illegible]

նախատեսված չէ, որի հիմքով հնարավոր կլիներ հայցային վաղեմության այլ ժամկետ հաշվարկել:

Հայցվորը սույն հայցով դատական պաշտպանության է դիմել 2016թ. հունիսի 28-ին, վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից 7 տարի անց:

Հետևաբար Դատարանը գտնում է, որ Հայցվորի պահանջի վրա պետք է կիրառել հայցային վաղեմություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335 հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման:

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին, Դատարանը գտնում է, որ Հայցվորից հօգուտ ՀՀ պետական բյուջե պետք է բռնագանձել 53.108,4 ՀՀ դրամ պետական տուրք՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարման ենթակա պետական տուրքը չի վճարել և խնդրել է այն հետաձգել: Դատարանի 30.06.2016թ. որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգվել է՝ այդ հարցին վերջնական դատական ակտով անդրադառնալու պայմանով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68 հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73 հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գույքային պահանջներով առաջին ատյանի դատարաններին տրվող հայցադիմումների համար պետական տուրքի դրույքաչափը կազմում է հայցագնի երկու տոկոսը, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից, իսկ ոչ գույքային պահանջով՝ բազային տուրքի քառապատիկը:

Սույն գործով հայցագինը կազմում է 2.655.420 ՀՀ դրամ, որի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարը կազմում է 53.108,4 ՀՀ դրամ:

Հետևաբար, հայցվոր Լավրենտի Սայադի Սուջյանից ՀՀ պետական բյուջե պետք է բռնագանձել պետական տուրք 53.108,4 ՀՀ դրամ՝ որպես դատարանում վճարման ենթակա պետական տուրքի գումարի:

Շարադրվածի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132, 140 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Տ

1. Լավրենտի Սայադի Սուջյանի հայցն ընդդեմ <<ՍԱՍՍՏԵՔՍ>> ՍՊ ընկերության, ՀՀ Կառավարության, Շիրակի մարզպետարանի, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության անհիմն հարստացման հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջի մասին, մերժել:

2. Հայցվոր Լավրենտի Սայադի Սուջյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել պետական տուրք՝ 53.108,4 (հիսուներեք հազար մեկ հարյուր ութ ամբողջ չորս) ՀՀ դրամ՝ որպես դատարանում վճարման ենթակա պետական տուրքի գումարի:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կարող է կատարվել ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ պարտապանի միջոցների հաշվին:

4. Վճիռը կարող է բողոքարկվել [illegible] քրեական քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ «10» 07 2018թ.

ԴԱՏԱՎՈՐ՝ Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ